# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նյութը պատրաստվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի
Ուսումնական բնագավառերի մշակման և զարգացման բաժնի
աշխատակիցների կողմից

# Ի՞ՆՉ Է ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Նախագծային ուսուցումը ուսուցման մի մեթոդ է, որի իրականացման ընթացքում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ (մինչև մեկ շաբաթ) կամ երկարաժամկետ (մինչև մեկ կիսամյակ) նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

**ՆՎԱՀԱԳՈՒՅՆ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՆՎԱՀԱԳՈՒՅՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՐԴԵՆ ԿԱՅՈՒՆԱՑԱԾ ՄՏԱՎՈՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է: ՀԻՆ ՀԱՄՈՀՄՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԴԺՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ:**

**ՋՈՆ ԴՅՈՒԻ**

Նախագծերի մեթոդը (Project methods) ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ. Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում, ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկրներում: Մեթոդի ի հայտ գալը կապվում է ՋոնԴյուիիանվան հետ, երբեմն անվանում են նաև հիմնախնդիրների մեթոդ: Նախագծերի մեթոդը իր նշականությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, այն 21-րդ դարի նորագույնմանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- Խթանել սովորողի ինքնազարգացումը՝ նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները կիրառելու համար:
- Օժանդակել սովորողների անհրաժեշտ կրթական կրողունակությունների և բովանդակային գիտելիքների ձևավորմանը,
- Զարգացնել համապատասխան հմտություններ, և ձևավորել կյանքի և աշխարհի մարտահրավերներն ընդունելու համար անհրաժեշտ արժեհամակարգ,
- Ապահովել սովորողների փոխհամագործակցությունը հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում:

Նախագիծն ըստ բովանդակության կարող է լինել մոնոառարկայական՝ իրականացվում է կոնկրետ առարկայի նյութի վրա, միջառարկայական՝ ինտեգրում է մի քանի առարկաներ և վերառարկայական:

Նախագիծը կարող է լինել ամփոփիչ, երբ նրա կատարման արդյունքների հիման վրա գնահատվում է սովորողների կողմից որոշակի ուսումնական նյութի յուրացման մակարդակը և ընթացիկ՝ երբ ինքնակրթության և նախագծային գործունեության համար առանձնացվում է ուսումնական նյութի միայն մի մասը:

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱՋՄՄԱՆ ՅՈԹ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

**Հավակնոտ խնդիր կամ հարց** (Challenging Problem or Question)
Նախագիծի հիմքում իմաստալից խնդիր է, որը պետք է լուծել, կամ հարց որին պետք է պատասխանել, բարդության համապատասխան մակարդակով

**Շարունակական հարցադրում** (Sustained Inquiry)
Սովորողները ներգրավվում են հարցադրումներ տալու, ռեսուրսներ գտնելու և տեղեկատվություն կիրառելու խիստ, ընդլայնված գործընթացում:

**Իրական բնույթ** (Authenticity)
Նախագիծը ներառում է իրական աշխարհի համատեքստը, առաջադրանքներն ու գործիքները, որակի չափորոշիչները կամ ազդեցությունը, կամ նախագիծը արտացոլում է սովորողների կյանքի անձնական խնդիրները, հետաքրքրությունները և խնդիրները:

**Սովորողի ձայնը և ընտրությունը** (Student Voice & Choice)
Սովորողները որոշումներ են կայացնում նախագծի վերաբերյալ, ներառյալ այն, թե ինչպես են նրանք աշխատում և ինչ են ստեղծում:

**Անդրադարձ** (Reflection)
Սովորողներն ու ուսուցիչները անդրադառնում են ուսմանը, հարցադրումների և նախագծային գործունեության արդյունավետությանը, սովորողների աշխատանքի որակին, դրանց առաջացման խոչընդոտներին և հաղթահարման ռազմավարություններին:

**Քննադատություն և վերանայում** (Critique & Revision)
Սովորողները տալիս են, ստանում և կիրառում են հետադարձ կապ՝ բարելավելու գործընթացը և իրենց արդյունքները:

**Հանրային արդյունք** (Public Product)
Սովորողներն իրենց նախագծի աշխատանքը դարձնում են հանրային՝ բացատրելով, ցուցադրելով և (կամ) այն դասարանի սահմաններից դուրս հանդիսատեսին ներկայացնելով:

01

# ԽՆԴԻՐԸ ԿԱՄ ՀԱՐՑԸ (ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ)

Ամենակարևորը նախագծի առաջարկած խնդիրն է, հարցը, որը պետք է հետազոտել և լուծում ու պատասխան տալ:

Այդ խնդիրը կարող է լինել իրական, գործնական, կամ վերացական: Որպեսզի նախագիծն իրականացնելու շարժառիթը ավելի մեծ լինի, պետք է առաջարկվող խնդիրների լուծումը հետաքրքրի սովորողներին: Նրանց ոչ թե գիտելիքի և կարողությունների ձեռքբերումը պետք է հետաքրքրի, այլ խնդրի լուծումը:

02

# ԱՆԸՆԴՀԱՏ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Հարցադրումներ անել նշանակում է փնտրել տեղեկություններ, կամ հետազոտել: Սովորողները առերեսվում են բարդ խնդիրների հետ՝ առանց պատրաստի լուծումներ ունենալու, նրանք շատ կրկնողական գործողություններ և հարցադրումներ են անում, և հնարավոր է, որ ավելի արդյունավետ լուծումների հանգեն իրենց ինքնատիպ և քննադատական մտածողությամբ: Նրանք հարցադրումներ են անում, դրանց պատասխանները գտնելու համար աղբյուրներ են փնտրում, արդյունքում, ավելի նպատակային հարցեր ձևակերպում:

03

# ՆԱԽԱԳԾԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ)

Երբ մարդիկ ասում են, որ ինչ-որ բան վավերական է, նկատի ունեն, որ դա իսկական է, կեղծ չէ:
Ուսումնական նախագծեր ձեռնարկելիս պետք է մտածել, թե որքանով են դրանք իրական կյանքին մոտ:
Վավերականությունը մեծացնում է սովորողների սովորելու շարժառիթը, ձգտումները:

04

# ՍՈՎՈՐՈՂԻ ՁԱՅՆԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սովորողները նախագիծն իրենցն են համարում, եթե իրենց խոսքն են ասել դրա ստեղծման գործում: Այդ դեպքում նրանք ավելի ջանասիրաբար են աշխատում:

Նրանք նախագծի իրականացման վերահսկողությունը իրենց ձեռքն են վերցնում, որոշում են իրենց դերը աշխատանքի բաժանման ընթացքում՝ որպես աշխատանքային թիմի անդամ:

05

# ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԿԱՏԱՐՎՈՂ ԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Նախագծի իրականացման ողջ ընթացքում սովորողները և ուսուցիչը պետք է պարբերաբար անդրադարձ կատարեն իրենց անցած ուղուն՝ պատասխանելով այս հարցերին. ի՞նչ են սովորել, ինչպե՞ս են սովորել և ինչու՞ են սովորել: Դրանք նախագծային կատարված աշխատանքի անհրաժեշտ պաշտոնական գնահատումներ են:

06

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Նախագծային ուսուցմամբ սովորողները պետք է փորձեն քննության ենթարկել և գնահատել իրենց հասակակիցների կատարած աշխատանքը, իրականացվող նախագծի ընթացքը: Իրականացվող և արդեն իրականացված նախագծերը կարող են գնահատել նաև նախագծի բնագավառի փորձագետները դրսից:

07

# ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ուսումնական նախագծի վերջնական արդյունքը ‹‹ապրանքը›› կարող է լինել առարկայական, շոշափելի, կամ էլ՝ մի խնդրի լուծման կամ հանրային հնչեղություն ունեցող հարցի պատասխանի ներկայացում: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացման հեռանկարը մեծացնում է նախագծի նկատմամբ լրջությունն ու պատասխանատվությունը:

# ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

- Նախագծի թեմայի ընտրություն
- Հիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքային խմբի ձևավորում
- Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաժանում
- Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ
- Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում
- Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
- Արտաքին գնահատում, վերլուծություն, ամփոփում
- Հետագա աշխատանքի ուղիների նախանշում

## ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է

- Նախագծի փուլերը, վերջնական արդյունքի կանխատեսումը:
- Նախագծի ձևակերպումը, նախապատրաստումը:
- Համագործակցումը այլ մասնագետների հետ:
- Համակարգումը:
- Կանոնավոր նախագծային աշխատանքից շեղումները տարբեր իրավիճակներից կախված:
- Նախագծերի հընթացս վերաձևակերպումը, մասնակիցների ներգրավումը, ընդլայնում կամ մասնավորեցում:
- Ժամկետների սահմանումը և այլ կազմակերպչական խնդիրները: Մասնակիցներիմոտիվացում:
- Նախագծի մասնակիցների ընտրություն:
- Աշխատանքի մասերի բաժանման սկզբունքները («ով ինչ կարող է», «ով ինչ ուզում է», «ով ինչ է ուզում սովորել այդ ընթացքում»):
- Ամեն մասնակցի ձեռքբերման մոտավոր կանխատեսումը:
- Աշխատանքային խմբերի կազմում:
- Աշխատանքի բաժանում:
- Կարճատև նախագծերի ծրագրում:
- Նախագծային աշխատանքի տեսական մասի կատարում (գրադարան, համացանց, խորհրդատվություն)
- Պատրաստած նյութերի վերանայում, քննարկում:
- Աշխատանքների իրականացում ըստ խմբերի:
- Վերջնական արդյունքի ստեղծում:
- Ավարտուննախագծերի արդյունքներիներկայացում:

“

# ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆԸ ԳՐԱՆՑԵԼ 2 ՓՈՒԼՈՎ՝ ՆԱԽԱԳԻԾԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼԻՍ, ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ՝ ՀԸՆԹԱՑՍ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱՆՄՈՒԾ**

ՆԵՐԲԵՌՆՄԱՆ ՀՂՈՒՄ

# ԿԱՐԵՒՈՐ Է ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ

## Հիմնական հարցերը

*Ի՞նչն է ձեզ և ձեր սովորողներին հետաքրքրում:*
*Ի՞նչ լսարան և փորձառու բանախոսներ ունեք տեղերում:*
*Ի՞նչ մատչելի գործիքներ ունեք:*

## Հիմնական տարրերը

*Սահմանել ՆՈՒ-ի հիմնական տարրերը:*

## Ռուբրիկները

Սովորողների համար կարևոր է պատկերացում ունենալ այն մասին, թե ինչի վրա պետք է կենտրոնանան, և ինչպես կգնահատվի իրենց աշխատանքը:

## Բովանդակությունը

Իր հիմքում նախագիծը կենտրոնացած է չափորոշիչներից և ակադեմիական առարկաների առանցքային հասկացությունների հիման վրա կարևոր գիտելիքների և հմտությունների փոխանցման վրա:

## 21-րդ դարի կարողունակությունները

Սովորողները զարգացնում են այսօրվա աշխարհի համար արժեքավոր կարողունակություններ, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը, համագործակցությունը, հաղորդակցությունը, ստեղծարարությունը/նորարարությունը, որոնք հստակ ուսուցանվում և գնահատվում են:

## Ինքնուրույնությունը

*Սովորողները ներգրավված են հարցեր տալու, ռեսուրսներ օգտագործելու և պատասխաններ մշակելու ընդլայնված, ակտիվ գործընթացում:*

## Ուղղորդող հարցերը

*Նախագծի վրա աշխատանքը կազմակերպում է բաց հարցերի վրա, որոնք սովորողները հասկանում և ընկալում են որպես ուղղորդում, որը գրավում է նրանց ուշադրությունը և ձևավորում ուսումնասիրության շրջանակը:*

# ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝

- Ավելի արդյունավետ է «Սովորողի կարողությունների զարգացում և հմտությունների ձևավորում» հիմնախնդրի լուծման գերակայության դեպքում;
- Սովորողների մեծ մասը հակված է իրականացնել միջնաժամկետ նախագծեր;
- Արագացնում է օտար լեզուների յուրացումը;
- Ներդաշնակեցնում է անհատի զարգացման մրցակցային և համագործակցային հարացույցները;
- Երկարաժամկետ նախագծի իրականացումը գիտական մտածողության ձևավորման անկյունաքարն է;
- Նախագծային գործունեության ընթացքում սովորողի գնահատումը գերադասելի է երկբալանոց՝ կարող է շարունակել մասնակցությունը նախագծին կամ չի կարող, իսկ նախագծի ամփոփման ժամանակ սովորողի ձեռք բերած արդյունքների գնահատումը հարկ է, որ հենվի ինքնագնահատականի և խմբի մյուս անդամների գնահատականի, ինչպես նաև հրապարակային պաշտպանության արձագանքների վրա;
- Անհրաժեշտ է միշտ ուշադրության կենտրոնում պահել նախագծային ուսուցման միջառարկայական բնույթը;
- Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը և նպաստում նրա սոցիալականացմանը: